ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՉԻՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՆՈՒՐԲԵԿՅԱՆ Լ. Զ.

Այսօր աշխարհում տեղի են ունենում հասարակական-քաղաքական փոխակերպումներ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով: Ընդ որում, ուժեղացող գլոբալացման պայմաններում այդ գործընթացներն ընթանում են փոխկապակցված, և հատկապես ուշագրավ են հաջողված փոխակերպումները, որոնցից մեկն էլ արդիականացման չինական մոդելն է:

Վերջին քառասուն տարիների ընթացքում հասարակական կյանքի բոլոր ոլորտների արդիականացման շնորհիվ ձեռք բերված հաջողությունները Չինաստանին հնարավորություն տվեցին միջազգային հարաբերությունների ոլորտում դառնալու կարևորագույն «բևեռներից» մեկը: Հասնելով միջին զարգացվածության պետության մակարդակի՝ Չինաստանի ղեկավարությունը գործնականում իրականացրեց «փոքր բարեկեցության հասարակության» կառուցման խնդիրը՝ նկատելիորեն բարձրացնելով իր քաղաքացիների կենսամակարդակը:

ՉԺՀ-ում քաղաքական-գաղափարախոսական տեսանկյունից քաղաքական արդիականացումը միտված էր հասարակական հարացույցի շրջանակներում սոցիալիստական հասարակարգի զարգացմանը, որը ստիպում է ուշադրությունը կենտրոնացնել նշված գործոնի ազդեցության մակարդակի խնդրի՝ ՉԺՀ-ում արդիականացման գործընթացի ամբողջության վրա:

Թեև Չինաստանում սոցիալիստական արդիականացումն անցկացվել է սկսած 1978 թվականից, սակայն դրա ուսումնասիրման տեսական հիմքը և գործիքակազմը հիմնվում են տարբեր պատմական դարաշրջանների մտածողների գիտական հետազոտությունների վրա: Չինական յուրահատկությամբ սոցիալիզմի կառուցման ճանապարհին բարենորոգումների անցկացումը, ըստ ՉԺՀ-ի պաշտոնատար անձանց կարծիքի, արդյունք էր գիտական սոցիալիզմի մասին մարքսիզմի հիմնարար դրույթների հետ չինական իրականության միավորման[1]: Ուստի պատահական չէ, որ ՉԺՀ-ում «մարքսիզմ-լենինիզմի և Մաո Ցզեդունի» գաղափարների կենսագործման սկզբունքն ամրագրված է սահմանադրության ներածական մասում[2]:

---

[1] *Տե՛ս "Жэньминь жибао" он-лайн http://russian.people.com.cn/31857/92155/ 6282085.html*

[2] *Конституция КНР, Пекин,1982, с. 3.*

XX դարի երկրորդ կեսին Չինաստանում գոյություն ունեցող տարբեր քաղաքական ուժեր առաջարկում էին երկրի զարգացման սեփական մոդելները: ՉԺՀ-ի պատմության մեջ վճռորոշ էր 1978 թվականը, քանի որ հենց այդ ժամանակ, հենվելով բարենորոգումների իրականացման նախորդ փորձի վրա, ձեռքբերումների և անհաջողությունների, նախապայմանների և հակասությունների վերլուծության շնորհիվ Դեն Սյաոպինը, որին անվանում են «չինական բարենորոգումների մեծն ճարտարապետ», գիտական գործիչների և մասնագետների հետ մշակեց սոցիալիզմի կառուցման նախադեպը չունեցող այնպիսի մոդել, որը նման չէր ո՛չ խորհրդային և ո՛չ էլ արևմտյան քաղաքական համակարգերին: Դա բացատրվում է «չինական յուրահատկությամբ սոցիալիզմի կառուցման» տեսության և պրակտիկայի վրա ավանդական քաղաքական փիլիսոփայական մտքի և առաջին հերթին կոնֆուցիական գաղափարների ազդեցությամբ[3]:

Արդիականացման խնդիրների վերաբերյալ Չինաստանի ղեկավարության քաղաքական կուրսի ձևավորումը գաղափարների, մեթոդների երկարատև փնտրտուքների արդյունք էր, որն իր արտահայտումը գտավ «չինական յուրահատկությամբ սոցիալիզմի կառուցման» տեսության մեջ[4]: Այն այսօր էլ, որպես պաշտոնական պետական գաղափարախոսություն, էական նշանակություն ունի երկրում բարենորոգումների հետևողական անցկացման գործում: «Չինական յուրահատկությամբ սոցիալիզմի կառուցման» տեսությունը կարելի է բնորոշել որպես անընդհատ կատարելագործվող տեսական հայեցակարգ, որը փոփոխվում է անցկացվող բարենորոգումների գործնականության հետ: Սոցիալիստական արդիականացման իրականացվող նախագիծը արդյունք է մարքսիստական, մաոիստական և հասարակության զարգացման մասին չինական ավանդական պատկերացումների համադրման, ինչպես նաև որոշ եվրոպական երկրների կողմից տնտեսական բարենորոգումների անցկացման մոտեցումների ընդօրինակման:

Սոցիալիստական արդիականացման նպատակն էր XXI դարի կեսին Չինաստանը դարձնել միջին զարգացվածության երկիր: Տնտեսության արդիականացումը ենթադրում էր տնտեսության որակական թարմացում և արդյունավետության բարձրացում գիտատեխնիկական ներուժի զարգացման հիմքի վրա: Ելնելով այն դրույթից, որ գիտությունը «գլխավոր արտադրողական ուժն է», գիտության զարգացումը Դեն Սյաոպինը համարում էր տնտեսության զարգացման հիմնական գրավականը՝

---

[3] **Переломов Л. С.** *Конфуцианство и современный стратегический курс КНР, М., 2007, с. 213.*

[4] **Смирнов Д.** *Дэн Сяопин и модернизация Китая (Проблемы Дальнего Востока, 2004, - 5, с. 22).*

միաժամանակ կոչ անելով փոխ առնել առաջատար պետությունների գիտատեխնիկական նվաճումները: Գիտության և տեխնիկայի զարգացման հիմքը նա տեսնում էր մտավոր աշխատանքի և ընդհանրապես հասարակության մեջ մտավորականության դիրքի բարձրացման մեջ:

Դեն Սյաոպինի առաջ քաշած ուղու կենսագործումն անխզելիորեն կապված էր Չինաստանը ժամանակակից իրավական պետություն դարձնելու գաղափարի հետ, որը հիմնված էր լինելու օրենքների գերակայության վրա՝ ՉԿԿ-ի ղեկավար դերի պահպանմամբ: Բարենորոգումների տարիներին մշակված բազմաթիվ օրենսդրական ակտերը կանոնակարգեցին տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքի մյուս ոլորտները: Քաղաքական համակարգի արդիականացման գործընթացում հիմնական դերը տրվում էր ղեկավարող կուսակցությանը: Այդ պատճառով էլ կոմունիստական կուսակցության կազմակերպումը, կարգ ու կանոնի ամրապնդումն ու ներկուսակցական վերահսկողության ուժեղացումը ՉԿԿ-ի ուշադրության կենտրոնում էին:

Չինաստանում բարենորոգումների հաջող անցկացման կարևոր գործոններից էր դրանց աստիճանական, բարեշրջական բնույթը: Դեն Սյաոպինը հատկապես ուշադրություն էր դարձնում սոցիալ-տնտեսական զարգացման համաշխարհային փորձի ուսումնասիրմանը, ուստի, ըստ նրա, բարենորոգումներն առաջին հերթին պետք է միտված լինեն հասարակական շահերի արտահայտմանը: Բարենորոգումների արդյունավետությունը նա տեսնում էր ուժեղ պետական իշխանության մեջ, որի գործառույթներից մեկը լինելու էր քաղաքական կայունության ապահովումը: Հաջողության ապահովման առանձնահատկություններից էին նաև բաց արտաքին քաղաքականությունը և օտարերկրյա ներդրումների ներգրավումը: Ստեղծվում էին արտաքին շուկա կողմնորոշված հատուկ տնտեսական շրջաններ, իսկ ծովամերձ շրջաններում՝ ազատ տնտեսական գոտիներ:

Դեն Սյաոպինը հրաժարվեց միաժամանակյա գների ազատականացումից և տնտեսության պետական սեկտորի արագ սեփականաշնորհումից: Բարենորոգումների բնորոշ գծերից էր նաև այն, որ միաժամանակ գոյություն ուներ երկու տնտեսական համակարգ՝ պլանային և շուկայական: Արդյունաբերության մեջ պետական ապարատի մենաշնորհ դիրքն աստիճանաբար թուլանում էր, որն էլ նպաստավոր պայմաններ էր ստեղծում մասնավոր և կոլեկտիվ ձեռնարկությունների համար շուկա մուտք գործելու, ինչպես նաև օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկությունների ստեղծման համար:

Սակայն շուկայական տնտեսության հիմքի վրա երկրի ամբողջ տնտեսական կյանքի երկարատև բարենորոգումների պայմաններում հնարավոր չեղավ խուսափել բացասական երևույթներից, ինչպիսիք էին հասարակության բևեռացումը, քաղաքի և

գյուղի անհամաչափ զարգացումը, բնակչության աղքատության հենքի վրա կոռուպցիայի աճը: Այդուհանդերձ, ծանր, անցումային պայմաններում ընթացող արդիականացման քսան տարիները ցույց տվեցին, որ Դեն Սյաոպինին հաջողվեց հաղթահարել քաղաքական, սոցիալ-տնտեսական հետամնացությունը և ապահովել երկրի առաջընթացը:

Չինաստանում, տնտեսական արդիականացման գործընթացի համեմատ, քաղաքական փոխակերպումներն ընթանում էին զգալիորեն դանդաղ: Սակայն տնտեսական արդիականացման հաջողությունը մեծապես կախված էր քաղաքական վերափոխումներից: Նախորդ տարիների տնտեսական բարենորոգումների անցկացման դժվարությունները ցույց տվեցին, որ հին քաղաքական-վարչական համակարգը, որին հատուկ էր իշխանության կենտրոնացումը, օրինականության բացակայությունը, վարչարարությունը, ամենաթողությունը, արդեն սպառել էին իրենց և խոչընդոտում էին երկրի հետագա զարգացմանը[5]:

1980 թ. Դեն Սյաոպինն առաջադրեց քաղաքական կառուցվածքի վերակառուցման խնդիրը, առանց որի դժվար էր իրականացնել երկրի տնտեսական համակարգի արդիականացումը: Քաղաքական ոլորտի բարեփո-խումները նպաստելու էին երկրի սոցիալական և տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում օրենքի և օրինականության ամրապնդմանը: Սակայն 1987 թ. հոկտեմբերին տեղի ունեցած ՉԿԿ XII համագումարը նպատակահարմար չգտավ հրաժարվել նախկին վարչական մեթոդներից[6] ՝ համարելով, որ քաղաքական արդիականացման իրականացումը վաղաժամ է:

1990-ական թթ. սկզբին առաջացած դժվարությունները էլ ավելի սրությամբ դրեցին քաղաքական արդիականացման հարցը, որը միտված էր ծառայելու կուսակցական, կառավարական և տնտեսական մարմինների գործառույթների հստակեցմանը, պետության կառավարմանը մասնակցելու ժողովրդի իրավունքի իրական ապահովմանը: Քաղաքական համակարգի արդիականացման իրականացման զգուշավորությունը ՉԿԿ-ն բացատրում էր ժողովրդավարության նախադրյալների և հասարակության քաղաքական մշակույթի, քաղաքական գիտակցության բացակայությամբ: Սակայն հասարակության մեջ ժողովրդավարկան միտումները աստիճանաբար աճում էին: Հասարակությունը պահանջում էր ոչ միայն քաղաքական համակարգի ժողովրդավարացում, այլև ՉԿԿ-ի ղեկավար դերի վերանայում:

Դեն Սյաոպինը, ժողովրդավարությունը համարելով արդիականացման գլխավոր երաշխիք, գործնականում չէր պատկերացնում դրա իրականացման մեխանիզմները:

---

[5] **Делюсин В.** *Трудный путь к социализму (Азия и Африка сегодня, 1989, - 10, с. 12).*

[6] **Гельбрас В.** *Экономические реформы в России и Китае: попытка сравнения (Азия и Африка сегодня, 1997, - 5, с. 23-24).*

Նրա համոզմամբ՝ Չի-նաստանի նման բազմազգ և լայնածավալ պետության համար իշխանության բարձրագույն մարմինները ուղղակի ընտրություններով ձևավորելու հարցը չէր հասունացել առաջին հերթին ժողովրդի ցածր քաղաքական մշակույթի պատճառով: Ըստ նրա՝ Արևմուտքի բազմակուսակցական խորհրդարանական համակարգն անընդունելի էր Չինաստանի համար, քանի որ նույնիսկ Արևմուտքի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչների կարծիքով նման մեծ երկրում առանց «ղեկավարման միջուկի» հնարավոր չէր լինի հաղթահարել նույնիսկ բնակչությանը սննդամթերքով ապահովելու խնդիրը: Ուստի Դեն Սյաոպինը համոզված էր, որ չի կարելի հրաժարվել սոցիալիզմի զարգացման ուղուց և կուսակցության ղեկավար դերից, քանի որ դրանք փոխպայմանավորված են և մեկ ամբողջություն են[7]:

Չինաստանի ղեկավարությունը բազմիցս հայտարարում էր, որ երկրում ժողովրդավարությունը զարգանալու է՝ հաշվի առնելով չինական առանձնահատկությունները, և ունենալու է սոցիալիստական բնույթ: Ակնհայտ է, քաղաքական բարենորոգումների հայեցակարգը չէր նախատեսում նոր քաղա-քական համակարգի ստեղծում: Խոսքը միայն ՉԿԿ-ի ղեկավար դերի պահպան-մամբ սոցիալիզմի «ինքնակատարելագործման և ինքնազարգացման» մասին է[8]:

Չնայած իր սահմանափակվածությանը և անավարտությանը, քաղաքական արդիականացման գործընթացը դրական արդյունք ունեցավ: ՉԺՀ-ն չգնաց քաղաքական բարենորոգումների արմատական ուղով, ինչպես ժամանակին ԽՍՀՄ-ը, և պահպանեց ՉԿԿ-ի իշխանությունը: Ղեկավար կադրերի երիտասարդացումը հնարավորություն տվեց Չինաստանին դիմակայելու ժամանակի մարտահրավերներին, իսկ ներկուսակցական կարգուկանոնի ուժեղացումը նպաստեց ՉԺՀ-ում կոռուպցիայի մակարդակի նվազեցմանը:

Այսօր, խոսելով ՉԺՀ-ում քաղաքական համակարգի բարենորոգումների մասին, կարելի է ասել, որ թեև Չինաստանում գոյություն ունեցող վարչակարգն ունի ավտորիտար բնույթ, այդուհանդերձ բացակայում է ամենաթողությունը, խթանվում են ներկուսակցական բանավեճերը, թույլատրվում է ունենալ սեփական կարծիք՝ նպաստելով ժողովրդի ինքնագիտակցության բարձրացմանը: Ուստի ՉԺՀ-ում փորձ է արվում կառուցել ժողովրդավարություն ոչ թե եվրոպական օրինակով, այլ մինչ այդ

---

[7] **Дэн Сяопин.** *Основные вопросы современного Китая, М., 1988, с. 235.*

[8] **Сергеев С.** *Реформа политической системы в Китае: замыслы и проблемы (Партийная жизнь, 1989, № 19, с. 78).*

աշխարհում նախադեպը չունեցող սկզբունքներով: Հենց դրանում է Չինաստանում արդիականացման գործընթացի առանձնահատկությունը:

Դեն Սյաոպինի գլխավորությամբ սկսված բարենորոգումները հաջողությամբ շարունակվում են և այսօր: Վերջին 35 տարիների ընթացքում բարենորոգումների և «բաց» քաղաքականության անցկացման շնորհիվ Չինաստանը բազմակողմանիորեն ներգրվեց համաշխարհային գլոբալացման մարտահրավերներին, համաշխարհային շուկայի պահանջներին և քաղաքակրթության զարգացման խորքային միտումներին: «Չինական յուրահատկությամբ սոցիալիզմի» կառուցման ամբողջ ընթացքում երկիրն առաջատար տեղ գրավեց ՀՆԱ-ի ամենաբարձր աճի տեմպերով (միջինը 10%) արտաքին առևտրի և ոսկու պաշարների ոլորտներում, որը նրան հնարավորություն տվեց տնտեսական աճի տեմպերի մակարդակով աշխարհում զբաղեցնելու երկրորդ տեղը՝ ապահովելով գերտերության կարգավիճակ:

КИТАЙСКАЯ МОДЕЛЬ МОДЕРНИЗАЦИИ В КОНТЕКСТЕ ЭКОНОМИЧЕСКОГО И ПОЛИТИЧЕСКОГО РАЗВИТИЯ

НУРБЕКЯН Л. З.

Резюме

Важной задачей современной политологии является анализ и обобщение политических и экономических процессов, происходящих в мире. В силу сказанного весьма интересен пример КНР, добившейся огромных успехов в проведении социально-экономических преобразований.

Благодаря реформам, начатым Дэн Сяопином, КНР за последние десятилетия укрепила свои позиции в мире.

THE CHINESE MODEL OF MODERNIZATION IN THE CONTEXT OF ECONOMIC AND POLITICAL DEVELOPMENT

L. NURBEKYAN

Abstract

The important task of modern political science is the analysis and synthesis of political and economic processes which take place in the world. Of particular interest is China that has achieved major success in carrying out social and economic reforms.

This article discusses the basic principles and essence of the reforms initiated by Deng Xiaoping in China, which has helped to achieve a qualitative breakthrough in economic and social development of the country over the past decade, and significantly strengthened the country's position in the world.